



ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՐՄ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ:

Ծրագիրն իրականացվում է «ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության» (UNIDO) և «ՄԱԿ-ի զարգացման ծրագրի» (UNDP) կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի (ԵՀԳԳԶԾ)» շրջանակներում իրականացվող «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» ծրագրում ընդգրկվելու համար

Ծրագրի մասին

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ գյուղատնտեսության կայուն զարգացման նպատակով և իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Ծրագիրը մեկնարկել է 2015թ.-ի հունվարին, տևողությունը՝ 36 ամիս:

Ծրագիրը իրականացվում է ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում:

Ի՞նչ աջակցություն է տրամադրում ծրագիրը

Ծրագիրը կաջակցի՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, դրանց, ինչպես նաև գործող կոոպերատիվների հզորացմանը, բիզնես կարողությունների զարգացմանը, արտադրության ծավալների ավելացմանը, արտադրանքի տեսականու ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարմանը, ինչպես նաև լավագույն գյուղատնտեսական փորձի (կաթիլային ոռոգում, այլ) և աղետների ռիսկերի նվազեցման (հակակարկտային ցանցեր, հակացրտահարության) համակարգերի ներդրմանը:

Ինչպիսի՞ խմբեր է փնտրում ծրագիրը

Ծրագրի կողմից առաջնահերթությունը կտրվի **մրգի, հատապտղի, բանջարեղենի, հացահատիկի և ընդեղենի, կաթի և կաթնամթերքի**, ինչպես նաև այլ գյուղմթերքի արտադրության և վերամշակման ոլորտներում նորարարական գաղափարներ (նոր տեխնոլոգիա, նոր արտադրանք) առաջարկող խմբերին: Կանանց և երիտասարդների մասնակցությունը խրախուսվում է:

Խմբերին ներկայացվող պահանջները

- Խմբերը պետք է կազմված լինեն տարբեր ընտանիքներ ներկայացնող և գյուղական համայնքներում գրանցված, բնակվող և գործունեություն ծավալող **առնվազն 5 ֆերմերից կամ 5 հիմնադիր անդամից:**
- Խմբերը պետք է հանդիսանան.
 - գրանցված կոոպերատիվ
 - չգրանցված ոչ ֆորմալ և նոր ստեղծվող խումբ:
- Խմբերը պետք է ունենան բիզնես ուղղվածություն:

Ինչպե՞ս դիմել

Հայտադիմումը կարող եք ձեռք բերել ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից, մարզպետարանից, ԳԱՄԿ-ից, համայնքապետարանից կամ ներբեռնել այստեղ՝ <http://www.un.am/hy/procurements>: Հայտադիմումների ընդունման **վերջնաժամկետն է ս.թ. հուլիսի 15-ը:** Հայտադիմումների ժամկետը չի սահմանափակվում նորարարական լավագույն գաղափարներ առաջարկող դիմորդ խմբերի համար: Հայտատուների ընտրությունը կկատարվի **սահմանված չափորոշիչների** համաձայն: Ծրագիրը կապ կհաստատի միայն ընտրված խմբերի հետ:

Խնդրում ենք ուղարկել լրացված հայտադիմումը հետևյալ էլ. հասցեներով՝

enpard-armenia@unido.org, enpard.armenia@gmail.com, կամ փոխանցել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, հասցեն՝ ք. Երևան, Պետրոս Ադամյան 14: Հարցերի դեպքում, խնդրում ենք զանգահարել **043 500 105** կամ **091 213 487** հեռախոսահամարներով:

Այս հրապարակումը որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: